Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025թ. հունիսի 10-ի N 241 - Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի հունիսի 15–ից

«30% ակնթարթային idcoin բացօթյա լողավազաններում» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 15.06.2025թ-ից 31.08.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:

1.2 **QR վճարում՝** «Իդրամ» ՍՊԸ (այսուհետ՝ Իդրամ) սպասարկման ցանցում ֆիզիկական անձանց կողմից Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) իրականացված QR վճարում (այդ թվում NFC, QR տեխնոլոգիայով և առցանց կայքերում կատարված QR վճարումները):

1.3 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:

1.4 **Հաճախորդ՝** ցանկացած օգտատեր, ով կիրականացնի Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) QR վճարում ստորև ցանկում ներառված լողավազաններում:

1.5 Արշավին մասնակցելու դեպքում Հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի: Մասնակցելով արշավին և ընդունելով idcoin-ները «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդ չհանդիսացող անձինք տալիս են իրենց համաձայնությունը իրենց անձնական տվյալները՝ եկամտահարկի հաշվարկման և վճարման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին փոխանցելու համար:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում, 15.06.2025թ-ից 31.08.2025թ-ը ներառյալ, Հաճախորդները կստանան 30% ակնթարթային idcoin կատարելով QR վճարումներ հետևյալ լողավազաններում՝

- «Ակվատեկ» սպորտային համալիրի լողավազան
- «Քրոսս» սպորտային համալիրի լողավազան
- «Դիլի թաուն» ռեզորթի լողավազան
- «Դիլիջանի տուն» հյուրանոց՝ «Գարուն» լողավազան
- «Հիլլս» սպորտային համալիրի լողավազան
- «Լանջ» ռեստորանի լողավազան
- «Մուլտի վելնես կենտրոն» մարզաառողջարարական համալիրի լողավազան
- «Պրեզիդենտ» հյուրանոցի լողավազան
- «Սան մարկո» լողավազան
- «Դը Փուլ» լողավազան
- «Զեն» լողավազան

- «N7» լողավազան

2.2 QR վճարման դեպքում idcoin-ի ստացման համար հիմք են ընդունվելու բանկային հաշիվներով, կից քարտերով, դրամապանակով, idplus կուտակված բոնուսներով/նվեր քարտերով, idcoin-ով, կոմբո տարբերակով, rocket line/rocket line 0%-ով կատարված վճարումները:

2.3 Արշավի շրջանակում մեկ հաճախորդին օրացուցային ամսվա ընթացքում տրամադրվում է հանրագումարային առավելագույնը 10 000 idcoin (հարկումից հետո): Փաստացի ստացման ենթակա idcoin-ը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 20% եկամտահարկի գանձումից հետո: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի կողմից:

2.4 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.5 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: